


ՄԻՋԱՏՆԵՐ

ՄԻՋԱՏՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆՆԸ

Միջատներու մարմինը կը բաղկանայ իրարմէ յստակօրէն տարբերող երեք մասերէ.



1.— Գլուխը կը կրէ աչքերը, որոնք ընդհանրապէս կ'ունենան մեծ թիւով փոքր ու տափակ երեսներ: Ան կը կրէ նաեւ բաւական կարծր ծնօտներով օժտուած բերան մը եւ երկու երկար շօշափուկներ, որոնք միջատին թէ՛ շօշափելիքի թէ՛ հոտոտելիքի գգայարաններն են: Միջատին շօշափուկները բողկուկներ կը կոչուին:

2.— Լանջքը կազմուած է իրարու կցուած երեք բաւական տոկուն օղակներէ, որոնց կցուած են երեք գոյգ յօդաւոր ոտքեր: Լանջքը ընդհանրապէս կը կրէ նաեւ երկու գոյգ թերեր:

3.— Որովայնը կը կրէ յօդերով իրարու կապուած բազմաթիւ օղակներ, որոնց մէջ բացուած են շնչառութեան ծառայող ծակեր. այդ շնչածակերէն դէպի ներս կը մեկնին փոքրիկ խողովակներ, որոնք իրարու միանալով միջատին շնչափողը կը կազմեն:

ՄԻՋԱՏՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿՐ ՍՆԱՆԻՆ

Միջատները կը սնանին ուտելիքները մանրելով կամ ծծելով:



Ուտելիքը մանրելով
կը ստանան իրենց սնունդը



Խայքելով եւ ծծելով
կը ստանան իրենց սնունդը

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐ

Ամենէն օգտակար միջատներն են մեղուն եւ շերամը: Օգտակար միջատներ են նաեւ գատկանին, կայծոռիկը, ոսկեայ բզեզը եւ ուրիշներ, որոնք հաններու, պիծակներու եւ այլ վնասակար միջատներու ձուերը եւ թրթուրները կը փնացնեն:

Վնասակար միջատներ են հաննը, պիծակը, մարախը, ջորեակը, ցորենի ուտինը, գետնախնձորի լուինը, որոնք կը փնացնեն ցանքերը եւ բուսականութիւնը: Ճանները, մծեղները, լուերն ու ոջիլները մեզ կը հաճախ վարակել վտանգաւոր հիւանդութիւններով:

ՄԵՂՈՒՆԵՐԸ

Խումբով ապրող միջատները հաւաքա-
կանութիւն մը կը կազմեն: Մեղուներու հաւա-
քականութեան մէջ իւրաքանչիւր մեղու իրեն
յատուկ աշխատանք ունի:



Մեղուները խումբով կ'ապրին փեթակ-
ներու մէջ: Փեթակի մը մէջ կան երեք տեսակ
մեղուներ:

- Թագուհի մեղու մը — Թագուհի մե-
ղուն գարնան եւ ամրան հազարաւոր ձուեր
կ'ածէ:

- Արու մեղուներ — Ասոնք թիւով քիչ են
եւ մեղր շինելով չեն զբաղիր:

- Գործաւոր մեղուներ — Ասոնք թիւով
շատ են եւ խումբերու կը բաժնուին. իւրաքան-
չիւր մեղու իր խումբին յատուկ գործը կը կա-
տարէ: Կարգ մը մեղուներ ծաղիկներու հիւրը
կը ֆաշեն, ուրիշ մեղուներ փեթակի մուտքին
պահակ կը կանգնին, որպէսզի օտար մեղուներ
ներս չմտնեն, ուրիշներ՝ իրենց թւերը շարժե-
լով հով կու տան եւ փեթակին օդը կը մաքրեն:
Կարգ մը գործաւորներ նորածինները կամ թա-
գուհին կերակրելով կը զբաղին:



Կարգ մը գործաւոր մեղուներ իրենց թեւերն ու ոտները կը ֆսեն ծաղիկներու անէջներուն, դեղին բեղմնափոշին հաւաքելու համար, նաեւ ծծելով կ'առնեն ծաղիկներուն հիւքը՝ նեկտարը, եւ կը վերադառնան փեքակ: Հոն ուրիշ գործաւոր մեղուներ մեղրամո-

մով կը պատրաստեն տեսակ մը պահարաններ, որոնք բլիթ կը կոչուին: Գուրսէն եկող մեղուները իրենց բերած հիւքը եւ բեղմնափոշին հոն կը պարպեն եւ հոն հիւքերու խառնուրդէն կը պատրաստուի համեղ եւ սննդարար մեղրը:

Մեղուն կը նըպաստէ նաեւ ծաղիկներու բեղմնաւորման:



ՊԱՐՍ

Երբ նոր մեղուներ ծնին, փեթակը պատիկ կու գայ թիւով բազմացած մեղուներու խումբին. այս պատճառով, մայր քագուհին խումբ մը մեղուներու հետ իր փեթակը կը ձգէ եւ կը հեռանայ: Անոնք կ'երթան եւ խումբով կը կառչին ծառի մը նիւղին: Մեղուներու այդ խումբը կը կոչուի պարս:



Մեղուաբոյծը պարսին տակ պարապ փեթակ մը կը դնէ եւ ծառին նիւղը շարժելով մեղուները կը հաւաքէ նոր փեթակին մէջ:

Ամբողջացո՛ւր:

Մեղուին մարմինը կը բաղկանայ
մասերէ, եւ

Մեղուները կ'ապրին
..... մէջ, հոն կը գտնենք
..... եւ մը:

Մեղուներու երբ խումբ մը
մեղուներու հետ հեռանայ: Կառչելով ծառի մը,
նոր մը կը կազմէ:

- Քանի՞ տեսակ մեղուներ կան պարսի մը մէջ:
1..... 2.....
3.....

ՇԵՐԱՄԸ

Շերամը օգտակար միջատ մըն է:

Շերամը մեզի մետաֆս կու տայ:

Շերամի *բրբուրը* կը մեծնայ բթենիի տերեւներ ուտելով, ապա բերնէն հանած բարակ թելերով իր շուրջը *խոզակ* կը շինէ եւ անոր մէջ փակուելով *հարսնուկի* կը վերածուի:

Շերամաբոյժները չեն թողուր, որ հարսնուկը թիթեռնիկի վերածուելով ծակէ խոզակը: Ժամանակէն առաջ խոզակները եռացած ջուրի մէջ ձգելով մետաֆսի թելերը կը ֆակեն եւ կը փաթթեն նախարակներու վրայ:


Անշուշտ, շերամաբոյժը խոզակներէն մաս մը մէկդի կը դնէ որպէսզի թիթեռնիկները ելլեն եւ ձուեր ածեն:



ՇԵՐԱՄԻ ԹԻԹԵՆՆԻԿԻ ԿԵԱՆՔԻ ՇՐՋԱՆԸ
(ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՆՈՒՄՆԵՐԸ)

Շերամը իր կեանքի ընթացքին կ'անցնի երեք տարբեր հանգրուաններէ:

Շերամի ամառ ձուէն դուրս կու գայ փոքրիկ թրթուրը: Թրթուրը քանի մը շաբաթ ապրելէ ետք՝ խոր քունի մէջ կը մտնէ, քնացած շրջանին կը կերպարանափոխուի եւ կը վերածուի հարսնուկի: Հարսնուկն ալ իր կարգին կատարեալ միջատ կը դառնայ. անկէ ետք՝ միջատը այլեւս չ'անիր:



ՇԵՐԱՄԻ ԹԻԹԵՆՆԻԿԻ ԿԵԱՆՔԻ ՇՐՋԱՆԸ:
1. ձուեր 2.3.4. թրթուր 5.6.7. հարսնուկ 8. միջատ

Միջատները ձուածին են, անոնց ձուերէն կը ծնին փոքր թրթուրները, որոնք կը վերածուին հարսնուկի եւ կատարեալ միջատի:

Ամբողջացո՛ւր.— ձուածին, օգտակար, վնասակար, բուրդ, մետաքս, մեղր:

- 1.— Շերամը միջատ մըն է: Ան մեզի կու տայ:
2.— Միջատները են. անոնց ձուիկներէն կը ծնին:
3.— Մեղուն միջատ մըն է: Մեզի կու տայ